ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2021/57

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 հուլիսի 2021 թ. N 57

«ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Խանջյան 67
Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021թ. հուլիսի 24-ին Հանձնաժողովի նիստում քննարկեց «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՄՈւՀ, ԱՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	9 հուլիսի 2020
ինքնավերլուծության ներկայացում	15 հոկտեմբերի 2020
փորձագիտական այցի իրականացում	23-26 նոյեմբերի2020
փորձագիտական զեկույցի ներկայացում	29 հունվարի 2021
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	11 փետրվարի 2021

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր» և «Հետազոտություն և զարգացում»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. Առկա են խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորվման տեսանկյունից, սակայն առաջխաղացման միտումներ և օրինակներ ևս առկա են:

Քոլեջում գործող ոչ բոլոր մասնագիտության կրթական ծրագրերն /ՄԿԾ/ են համահունչ առաքելությանը: Ըստ կանոնադրության և առաքելության՝ ԱՊՔ-ի գործունեությունը նպատակաուղղված է տնտեսագիտական, սպասարկման, մանկավարժական կրթության իրականացմանը: Սակայն, ՄՈՒՀ-ը պատրաստում է մասնագետներ նաև այլ՝ առաքելությամբ չնախատեսված, ուղղություններով: ՄԿԾ-ները մշակված են պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների, և հիմնականում ապահովում են ուսումնառողների մասնագիտական կարողունակությունների ձևավորումը:

Առկա որոշակի թերությունները վերացնելու ուղղությամբ քոլեջը պլանավորել է իրականացնել կոնկրետ գործողություններ:

ԱՊՔ-ն ապահովված է բարձր որակավորում ունեցող համեմատաբար երիտասարդ դասախոսական և վարչական անձնակազմով: Քոլեջի ղեկավարությունը գիտակցում է երիտասարդ կադրերի մանկավարժական ու մասնագիտական հմտությունների աստիճանական զարգացման կարևորությունը և քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ: Քոլեջն իր առաքելության և մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար ունի անհրաժեշտ ուսումնական միջավայր, ռեսուրսներ և նյութատեխնիկական բազա, որոնք հնարավորություն են ընձեռում ՄԿԾ-ների իրականացման համար:

2. Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:

ԱՊՔ-ի գործունեությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է սահմանած առաքելությանը, համահունչ է ՀՀ ՈԱՇ-ին, հաստատության նպատակներն ու խնդիրները որոշ չափով արտահայտում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ԱՊՔ-ում ռազմավարական կառավարման մշակույթը ներդրվել է վերջին տարիներին, աստիճանաբար քոլեջի կառավարման նպատակով ներմուծվում են արդյունավետության ցուցիչների վրա հիմնված ռազմավարական կառավարման տարրեր: ԱՊՔ-ում առկա են կառավարման գործընթացներն ապահովող ընթացակարգեր, կանոնակարգեր: ՄՈՒՀ-ում չի գործում երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման իրականացման և մշատադիտարկման քաղաքականություն: ԱՊՔ-ում գործում են տվյալների հավաքագրման մեխանիզմներ և համակարգեր՝ սակայն դրանք համալրման կարիք ունեն: ԱՊՔ-ում առկա է հաշվետվողականության գործող համակարգ, սակայն վերլուծողական բաղադիրչը դեռևս բացակայում է:

ՈԱ գործընթացները ԱՊՔ-ում նոր են ներդրվել: ԱՊՔ-ն ստեղծել է ոլորտը կարգավորող փաստաթղթեր, առկա է որակի ներքին ապահովման կենտրոն, որն հստակ պատկերացնում է կառույցի գործընթացներն ու անելիքները: ՄՈՒՀ-ի դասախոսներն ու ուսանողները ներգրավված են ՈԱ գործընթացներում: Սակայն քոլեջում դեռևս ամբողջությամբ չի գործում որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլը և գործընթացները գտնվում են ներդրման փուլում: Քոլեջը կարևորում է որակի ներքին ապահովման համակարգը և հստակ քայլեր է իրականացնում դրա կայացման ուղղությամբ:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունը բավարար են աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը

ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկում՝ ընդլայնելու համագործակցությունը տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ ապահովելով համագործակության լայն շրջանակ:

ԱՊՔ-ն համագործակցում է մի քանի միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների և մարզային «Զբաղվածության կենտրոն» հետ. միջազգային հարթակում դեռևս համագործակցային և գործընկերային հարաբերություններ չունի: Դեռևս թույլ է ՄՈՒՀ-աշխատաշուկա կապը, քանի որ գործատուները ԱՊՔ-ում ներգրավված չեն որպես դասախոսներ:

ԱՊՔ-ն կազմում և ներկայացնում է հաշվետվություններ ներքին և արտաքին շահակիցներին, ՄՈՒՀ-ի կողմից ապահովվում է հաշվետվությունների թափանցիկությունն ու հասանելիությունը. քայլեր են ձեռնարկվում հասարակությանը մասնակից դարձնելու ՄՈՒՀ-ի կրթական գործընթացներին:

ՄՈՒՀ-ի կողմից մշակված «Հետազոտությունների ոլորտի ՌԾ-ում» հստակ արտահայտված չեն հետազոտական նպատակները, իրագործման քայլերի հաջորդականությունն ու ժամկետները, մշակված չեն հստակ քաղաքականություն և ընթացակարգեր: Քայլեր չեն ձեռնարկվում

հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ: ԱՊՔ-ի հետազոտական և ուսումնական գործընթացները փոխկապակված չեն:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային ազդեցություն չունեն որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված ոչ բոլոր խորհրդատվություններն են ճիշտ ընկալվել քոլեջի կողմից: Սահմանված ակնկալվող արդյունքների մեծ մասը չի համապատասխանում փորձագիտական խմբի կողմից սպասվող բարելավումներին: ԱՊՔ-ի բարելավման ծրագիրն իր մեջ որոշ ռիսկեր է պարունակում և վերանայման կարիք ունի:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - Կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման և ՌԾ-ին համապատասխան վերլուծական հաշվետվողականության իրականացմանը,
   - քոլեջի կողմից կազմակերպվող գործընթացների առավել կանոնակարգված և կոլեգիալ հիմունքներով իրականացման
   - քոլեջի բոլոր գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավմանը,
   - ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և գնահատման մեթոդների հստակ քաղաքականության մշակմանը,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձեռքբերմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:
   - Որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացմանը, ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
   - ՈԱ գործընթացների պլանավորմանը՝ ներգարվելով ներքին և արտաքին շահակիցներին:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի

պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:

5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին՝ պարտադիր մշտադիտարկման ենթարկել Արարատի պետական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
Նախագահ՝ **Ա. Սաղյան**
2021 թ., հուլիսի 24
ք.Երևան